

ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ.  
ՕՕՕՕ Օ **1935**-ՈՕ, ՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ  
ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ **1967**-ՈՕ ՕՕՕՕ  
ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ ՕՕ **1962**-ՈՕ ՕՕՕՕՕՕՕՕ Օ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ  
ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ,  
ՕՕՕՕՕՕՕ ՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ  
ՕՕՕՕՕ ՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕ Օ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ -ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕ ՕՕ  
ՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ  
ՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕ Օ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ

79-ամյա գեղանկարիչը, 1978-ի անդրանիկ անհատական ցուցահանդեսից 36 տարիների ընդհատումից հետո, այս օրերին Կրաստանի հայ նկարիչների միության եւ Կիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի աջակցությամբ, Կենտրոնի պատկերասրահում կերպարվեստի սիրահարների դատին հանձնեց իր հին ու նոր խեցեգործական եւ յուղաներկ աշխատանքները:

Ընդգծելով վարպետի վրձնարվեստի առանձնահատկությունը՝ Կրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը մասնավորապես արժեւորեց նրա խեցեգործության պլաստիկան, իսկ յուղաներկում՝ գույնի կատարյալ զգացողությունը... Եվ չկարողացավ չընդգծել՝ «Կան նկարիչներ, որ անընդհատ ուզում են նման անձնասրահներով լինել հանրության ուշադրության կենտրոնում, իսկ ծերունագարդ գեղանկարիչը, իրեն հատուկ բացառիկ համեստությամբ, երկար թախանձանքից հետո միայն համաձայնեց ցուցահանդեսին...»:

Իսկ ի՞նչ էր նշանակում աներեւույթ ու անբացատրելի, բայց եւ անժխտելի փաստը՝ բոլորի կողմից զգացած ջերմությունը, որ տարածվում էր սրահում կտավներից... Այդ մասին ներկաների մեկնաբանությունները տարբեր էին: Ոմանց կարծիքով, սրահի խաղաղ ու տաք մթնոլորտի աղբյուրը բարձրաճաշակ, բարձրարվեստ կտավներն էին... ոմանք էլ՝ գեղանկարչի գործերից բխող դրական այդ լիցքը վերագրում էին նաեւ նրա էքստրասենսային կարողությամբ օժտվածությանը... Առանձնակի արձագանքի արժանացավ «Լամպը» գեղանկարը, որն իր հնագույն բույրերով ու տարածող լույսով, ասես, ծերունագարդ հեղինակի խորհրդանիշը լինի...

Անձամբ իր՝ Գարեգին Միրզոեւ արվեստագետի համար, կարելիորը դիտորդին Գեղեցկությունը փոխանցելն է՝ «Եթե իմ խեցեգործությամբ ես ուզում եմ Գեղեցիկն արտահայտել տեխնիկայի, գտնված ձեւի միջոցով, իսկ յուղաներկում՝ նույնչափ գտնված գույների եւ դրանց ստեղծած տրամադրության փոխանցումով, ապա իմ ցանկությունը բարին է, ուրեմն եւ՝ ջերմացնող»:

Եվ, այնուհանդերձ, արվեստագետը խոստովանեց, որ այս ցուցահանդեսը բարոյապես ոգեւորել է իրեն, ու ինքը մտովի արդեն իր նոր հղացումներն է ուրվագծում, իսկ այդ օրը պատկերասրահից դիտորդին ժպտում, նրան բարության մղում եւ ուրախացնում էին նրա անկրկնելի կտավները՝ «Տարվա եղանակներ» (ուր բացակայում էր ձմեռը, որովհետեւ հեղինակը չի սիրում ձմեռը...), «Դաշտային ծաղիկներ», «Ծաղկող ծառ», «Գարուն», «Նավահանգիստ Քնի ափին» «Հաց ու պանիր»... եւ ինքնատիպ խեցեգործությունը՝ «Օրիորդը սպիտակ ձիու վրա», «Երկնագույն խաղողաքաղ», թղթից եւ քարերից նրբահյուս՝

«Կարմիր աշուն», «Միրգ», «Հին Թիֆլիս»... խճանկարները:  
Ավետազետին գնահատանքի խոսք հղեց Կրաստանի արվեստի վաստակավոր գործիչ  
Ռոման Սուխիշվիլին, իսկ Տեր Մանուկ քահանա Ջեյնալյանը վարպետին փոխանցեց  
Կիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Տեր եպիսկոպոս Միրզախանյանի օրհնությունը:

ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱՂԱԼՅԱՆ